ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԻՐԵՐ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ՝ ՔԱՐԱԿԵՐՏՈՒՄ

Այս տարի Առաքելական Եկեղեցին Սուրբ Սարգիսի տոնը նշեց փետրվարի 4-ին:

Սուրբ Սարգիսի տոնին հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվել է Ս. Պատարագ:

Ս. Սարգիսի տոնին նախապատրաստվել էր նաեւ Քարակերտ համայնքը: Տոնին նախորդող օրը համայնքի երիտասարդների մի խումբ համախմբվել էր Արմավիրի թեմի Քարակերտի Գրիգոր Նարեկացու հոգեւոր մշակույթի կենտրոնում, որտեղ կենտրոնի տնօրեն Աննա Ղուկասյանի առաջնորդությամբ քննարկվեցին տոնի հետ կապված ավանդույթներն ու սովորույթները, այն, թե ինչպես են տոնել նախկինում: Գրիգոր Նարեկացու հոգեւոր մշակույթի կենտրոնում փետրվարի 4-ին կատարվեց երիտասարդների օրհնության արարողակարգ: Տեր Արարատ քահանա Պողոսյանը օրհնեց Քարակերտի երիտասարդներին, որն ուղեկցվեց օրվա խորհուրդի մեկնությամբ:

«Ինձ համար այնքան նշանակություն չունի աղի բլիթի հետ կապված ավանդույթը, որքան օրվա գլխավոր խորհուրդը. Աստվածային սերն ու հավատքը քո մեջ զգալը: Կարեւորում եմ նաեւ այն, որ երիտասարդներն այսօր ակտիվ հոգեւոր կյանք են վարում ու ավելի, քան նախկինում, հետաքրքրված են եկեղեցական տոներով»,- ասաց Քարակերտ համայնքի 11-րդ դասարանի աշակերտուհի Մարտիրոսյան Սոնան:

Հատկանշական է այն, որ երիտասարդները քննարկումների ժամանակ միայն աղի բլիթի մասին չէին խոսում ու հարցեր ուղղում, այլեւ հետաքրքրվում էին տոնի խորհրդով ու նշանակությամբ :

«Ուրախ եմ, որ Քարակերտում գործում է ոչ միայն հոգեւոր կենտրոն, այլեւ ունենք այցելու հոգեւորական: Չունենալով եկեղեցի՝ հոգեւոր կենտրոնը եւ այցելու քահանան կապող օղակ են հանդիսանում եկեղեցու եւ համայնքի միջեւ: Մշտապես իրազեկված են պահում երիտասարդներին: Ուրախ եմ, որ այսօր կենտրոնը այցելու քահանայի հետ միասին փորձում են աշխուժացնել համայնքի հոգեւոր կյանքը»,- ասաց Շախնազարյան Ստելլան:

Նշենք տոներն աղոթքով, հիշենք ժողովրդական ավանդույթները եւ լինենք հայկական ավանդույթների արժանի կրողներն ու շարունակողները:

ԱՆԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Վարդանանց տոնը ճեմարանում

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 16-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Վարդանանց հերոսամարտին նվիրված հանդիսություն: Հանդիսությունը կազմակերպվել էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողության համատեղ ջանքերով:

Հանդիսության սկզբում բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ ռեկտոր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը, որ շնորհավորեց բոլորին տոնի առիթով, ապա, խոսելով հայ ժողովրդի կյանքում տոնի նշանակության մասին, նշեց, որ այն խորհրդանիշն է մեր ժողովրդի պայքարի ու կյանքի հանդեպ սիրո, ինչպես նաեւ ապրելու եւ արարելու ցանկության:

Ցերեկույթի մասնակիցներին Վարդանանց հերոսամարտի մասին բանախոսություն ներկայացրեց ճեմարանի եւ համալսարանի դասախոս պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը:

Հանդիսության ժամանակ հոգեւոր եւ հայրենասիրական երգերով հանդես եկան Գեւորգյան ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի երգչախմբերը: Առանձին ուսանողներ արտասանեցին նաեւ Ս. Վարդանանց նվիրված բանաստեղծություններ:

Ավանդական դարձած այս գեղեցիկ միջոցառումն իր հայրական պատգամով ու օրհնությամբ ամփոփեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Փետրվարի 12-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուսանողների՝ ուղեկցությամբ հայագետ Յասմին Դունթզագութի:

Յասմին Դունթզագութը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար եւ ներկայացրեց այցելության նպատակը: Նա մասնավորապես նշեց, որ Ավստրիայի տարբեր քաղաքներից ու համալսարաններից հավաքված եւ տարբեր մասնագիտություններ ունեցող ուսանողների այս խումբն ամեն տարի այցելում է որեւէ մի քրիստոնյա երկիր: Այս տարի խումբը այցելել է Հայաստան՝ ծանոթանալու հայկական հարուստ մշակույթին, պատմությանը, եկեղեցուն եւ առհասարակ հայերի առօրյա կյանքին:

Վեհափառ Հայրապետը ուրախություն հայտնեց ուսանողներին ընդունելու կապակցությամբ՝ նշելով, որ նրանց այցելությունը հիշեցնում է իր ուսանողության

տարիներն Ավստրիայում: Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց երիտասարդներին՝ մաղթելով, որ Հայաստանի հարուստ հոգևոր մշակույթը նորանոր ներշնչումների աղբյուր դառնա նրանց համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց 40-օրյա մանուկ Հիսուսին տաճարին ընծայման տոնը:

Տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց նախատոնակի արարողություն: Արարողությանը հաջորդեց անդաստանի կարգը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը: Այնուհետեւ Մայր Տաճարի Իջման խորանից վառված մոմով Ս. Տրդատի բաց խորանի հարեւանությամբ վառվեց մեծ խարույկը՝ իբրեւ Քրիստոսին խորհրդանշող լույս: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով, արարողությանը ներկա հավատացյալները խարույկից վառված մոմեր տարան իրենց օջախները:

Փետրվարի 14-ին Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Նշելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Տեառնընդառաջի օրը հռչակված է նաեւ նորապսակների օրհնության օր, Սրբազան Հայրը մաղթեց, որ Տերը Սիմեոն ծերունու երկարակեցությունն ու կամքի խոնարհությունը պարգեւի նորաստեղծ ընտանիքներին՝ նրանց ապագա տարիները լցնելով անսպառ օրհնությամբ:

Սուրբ Պատարագի ավարտից հետո հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ: Հոգեզմայլ շարականների երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը օրհնեց նորապսակ զույգերին: Հայցելով, որ Տերն իր շնորհներն առատորեն հեղի նորակազմ ընտանիքների վրա՝ Նորին Սրբությունը պատգամեց նրանց ընտանեկան կյանքը կազմակերպել Տիրոջ պատվիրաններին համապատասխան, ընթանալ միշտ բարու ճանապարհով, սիրել մարդկանց, եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նորապսակների օրհնություն

ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ թեմական առաջնորդների, տեղի ունեցավ Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով զումարվող քահանայից ավանդական ամենամյա հավաքը: Քահանայից ժողովին մասնակցում էին շուրջ երկու հարյուր երեսուն եկեղեցականներ, որ իրենց ծառայությունն են բերում Մայր Աթոռի կառույցներում, վանքերում, Հայաստանի ու Արցախի թեմերում, ինչպես նաեւ ներկայացուցիչներ Սփյուռքի հայոց թեմերից: Ժողովի քննարկման նյութն էր՝ «Քահանան եկեղեցական-սոցիալական աշխատանքի հիմնական դերակատար»:

Առավոտյան հոգեւորականաց դասը Մայր Տաճարում մասնակցեց Արեւագալի ժամերգության, որից հետո ժողովն սկսեց իր աշխատանքը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում:

Ժողովը բացվեց հավաքի կազմակերպիչ, Ծիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի խոսքով: Քահանայից դասի անունից նա շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին Մայր Աթոռում համախմբվելու, Նորին Սրբության օրհնությունն ու հայրական պատգամները ստանալու հնարավորության համար, ապա շնորհավորեց հոգեւորականներին տոնի առիթով՝ մաղթելով նրանց ընթանալ Ղեւոնդյանց ոգով՝ արձանագրելով նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ հովվական ասպարեզում:

Թեմայի շուրջ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ ԵՀՍ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի գլխավոր տնօրեն Կարեն Նազարյանը:

Զեկույցներից հետո տեղի ունեցավ քննարկում, որի արդյունքում ընդունվեց հետեւյալ հայտարարությունը. «Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սպասավորներս, կարեւորում ենք Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնը որպես հրավեր ուխտի նորոգման, առավել զորացնելու հոգեւոր մեր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Քահանայի հովվական առաքելության մեջ էական եւ կարեւոր տեղ է զբաղեցնում սոցիալական ծառայությունը: Գոհություն ենք հայտնում Տիրոջը, որ մեր Եկեղեցին արդյունավորում է իր առաքելությունը տարբեր սոցիալական ձեռնարկումներով, որոնք արտահայտվում են հասարակության սոցիալական խոցելի խմբերին՝ հիվանդներին, ազատազրկվածներին, բռնության ենթարկվածներին, անապահով անձերին ու ընտանիքներին, մանուկներին ու ծերերին ուղղված հոգեխնամատարական ծրագրերով: Մենք պատասխանատու ենք նկատում մեզ հասարակության առջեւ ծառացած սոցիալական մարտահրավերների հաղթահարման գործում եւ կարեւորում յուրաքանչյուրիս ծառայությունը սոցիալապես անապահով միջավայրերում, որպեսզի հոգեւոր ու բարոյական փորձությունները եւ

կարիքը պատճառ չդառնան Աստծուց հեռացման ու հոգիների փրկության խաթարման: Այս հրամայականի առջև Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի խորհուրդը դիտարկում ենք որպես ազդու պատգամ առավել ակնառու դարձնելու համար մեր հովվական սպասավորության մեջ սոցիալական աշխատանքը: Հորդորում ենք նաեւ Հայ Եկեղեցու հավատավոր հոտի անդամներին գործնականորեն սատարելու Եկեղեցու սոցիալական ծառայությանը, ջանքեր ներդնել Տիրոջ գթասրտության եւ ողորմության պատգամներն առավել արդյունավոր միջոցներով արտահայտելու համար սոցիալապես խոցելի խմբերի կյանքում:

Ս. Ղեւոնդյանց քահանայից բարեխոսության հայցով աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ Իր խնամքի ու հոգածության մեջ հանապազ պահի ու պահպանի մեր ժողովրդին եւ խաղաղություն պարգեւի հայրենի մեր երկրին՝ պայծառության մեջ հաստատուն պահելով Առաքելական մեր Ս. Եկեղեցին»:

Այնուհետեւ տեղի ունեցավ պարգեւաբաշխություն: Տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Տ. Խորեն քահանա Կիրակոսյանին, Տ. Պարույր քահանա Ավետիսյանին եւ Տ. Վահրամ քահանա Մելիքյանին:

Լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Տ. Հովել քահանա Գամաղելյանը, Տ. Արարատ քահանա Պողոսյանը, Տ. Մարկոս քահանա Մանգասարյանը, Արարատյան Հայրապետական թեմից Տ. Նիկողայոս քահանա Հովհաննիսյանը, Տ. Միքայել քահանա Նուրիջանյանը, Տ. Աշոտ քահանա Սաֆարյանը, Հարավային Ռուսաստանի Հայոց թեմից Տ. Գեորգ քահանա Միրզոյանը, Գուգարաց թեմից Տ. Ներսես քահանա Ղալայանը, Տ. Ահարոն քահանա Գրիգորյանը, Տ. Վիգեն քահանա Ղազարյանը, Վայոց Ձորի թեմից Տ. Վազգեն քահանա Հովհաննիսյանը, Արագածոտնի թեմից Տ. Հայկ քահանա Սահակյանը, Տ. Եփրեմ քահանա Ջարգարյանը, Գեղարքունյաց թեմից Տ. Սողոմոն քահանա Մինասյանը, ՀՀ ԶՈՒ հոգեւոր սպասավորությունից Տ. Դավիթ քահանա Շախկյանը, Գեղարքունյաց թեմից Տ. Ստեփանոս քահանա Իգնաթեւոսյանը, Տավուշի թեմից Տ. Շավարշ քահանա Սիմոնյանը, Վիրահայոց թեմից Տ. Հուսիկ քահանա Հարությունյանը, Տ. Նարեկ քահանա Ղուշչյանը եւ Տ. Սամվել քահանա Թորոսյանը:

Ժողովի ավարտին ներկա հոգեւորականներին հայրապետական իր պատգամը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհավորելով հոգեւորականներին Սրբոց Ղեւոնդյանց տոնի առիթով՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերն օգնական եւ զորավիգ լինի Հայ Եկեղեցու սպասավորներին արդյունավոր կերպով շարունակելու իրենց առաքելությունը: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ այսպիսի հավաքները հոգեւորականների համար գեղեցիկ առիթ են անդրադարձումի իրենց կոչմանը եւ առաքելության արդյունավորմանը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ ժողովի նյութին՝ քահանայի դերակատարությանը սոցիալական ոլորտում. «Սոցիալական ոլորտից ներս ծառայությունը հայ եկեղեցականի կոչումն է, նրա առաքելության հիմնական եւ կարեւոր մասը: Անդրադարձանք մի շարք խնդիրների, ինչպիսիք են՝ թմրամոլությունը, բռնությունը, ընտանեկան դաստիարակությունը, ծնող-զավակ, տղամարդ-կին հարաբերությունները,

Բանակցություն խաղաղ Սևան Կիրառում

աղքատությունը, եւ նմանատիպ այլ երեւույթների: Հայ եկեղեցականի կոչումն է պայքարել այնպիսի երեւույթների դեմ, որոնք մեղք են ծնում, իսկ միջոցը բնականաբար Ավետարանի խոսքն է»: Այդ առաքելության իրագործման հիմնական միջոց Նորին Սրբությունը նկատեց հոգեւորականի պատասխանատվությունը, նախանձախնդրությունը, կոչման գիտակցությունը ծառայության հանդեպ, անվերապահ եւ անպայմանավոր սերը, որ պետք է մշտապես դրսեւորվի հավատավոր հոտի հանդեպ:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը իր գնահատանքը հայտնեց թեմական առաջնորդներին, որոնց նվիրյալ աշխատանքի արդյունքում տարեցտարի առաջընթաց է արձանագրվում թեմերում: «Մեր աղոթքն ու հայցն ենք առ Աստված բարձրացնում եւ խնդրում Երկնավորից, որ զորացնի ձեզ ձեր հավատքի մեջ, մեր ժողովրդին ծառայելու գործում սիրո մեջ», - մաղթեց Նորին Սրբությունը հավաքված եկեղեցականությանը:

Ժողովի ամփոփումից հետո Մայր Տաճարում հոգեւոր դասը մասնակցեց Երեկոյան ժամերգության եւ Ս. Վարդանանց տոնի նախատոնակին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ԱԼՅԱՆՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Փետրվարի 16-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Եկեղեցիների համատեղ գործողություն» Ալյանսի (ACT Alliance) սոցիալ-հոգեբանական խմբի անդամներին՝ ուղեկցությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանի:

ԵՀԽ «Եկեղեցիների համատեղ գործողություն» Ալյանսի գործունեությունն ուղղված է աղքատության հաղթահարմանը եւ արտակարգ իրավիճակների աղետալի հետեւանքների վերացմանը ողջ աշխարհում: 2010թ. կազմակերպությունն ստեղծեց սոցիալ-հոգեբանական աջակցության խումբ, որի հիմնական գործառույթներն են սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրումը ծանր հոգեվիճակում հայտնված մարդկանց՝ աղետների դիմակայման ու նրանց իսկ մասնակցությամբ դրանց հետեւանքների վերացման աշխատանքներում:

Հանդիպմանը խմբի անդամներն ուրախություն հայտնեցին խմբի տարեկան ժողովը Հայաստանում անցկացնելու հնարավորության համար, ապա Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին եռօրյա ժողովի արդյունքները:

Այնուհետեւ Ալյանսի մարդասիրական առաքելությանը գնահատանքով անդրադարձավ Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը գոհունակություն

հայտնեց Կլոր սեղան հիմնադրամի եւ Ալյանսի համագործակցության առիթով՝ ընդգծելով համատեղ իրականացվող բարեգործական ու կարողությունների զարգացման ծրագրերի կարեւորությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը խմբին ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական աշխատանքները, ինչպես նաեւ այդ ոլորտում ձեւավորված համագործակցությունը Քույր եկեղեցիների եւ միջազգային կազմակերպությունների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ

Փետրվարի 16-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, մեծ հանդիսավորությամբ նշվեց Սրբոց Վարդանանց զորավարաց տոնը: Այս առիթով Միածնաէջ Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանականները եւ բազում ուխտավորներ:

Արարողության ավարտին իր քարոզում պատարագիչ Սրբազանը հանգամանորեն անդրադարձավ սուրբ Վարդանանց նահատակության խորհրդին: «Ավարայրի ճակատամարտից հետո անցել են դարեր, սակայն Վարդանանց ոգին կենդանի է մեր մեջ, հաղորդակից է մեր գոյությանը, մեր կյանքին: Այն զուտ պատմական փաստ չէ, որով պարծենում ենք, այլ շարունակվող իրադարձություն: Մարդկության պատմությանը հայտնի են իրադարձություններ, որոնք հեղաշրջող նշանակություն են ունենում ազգերի կյանքում, հարստացնում են նրանց ինքնությունը եւ անմահացնում անունը: Այս ձեռքբերումներով են ազգերը ներկայանում աշխարհին, դրանք են գաղափար տալիս մարդկությանը նրանց կարողության, դավանած արժեքների եւ նպատակների մասին: Վարդանանց հերոսամարտը այսպիսի մի կերտող նշանակություն է ունեցել մեր ազգային ինքնության համար՝ խոհի ու մաքառման նոր հուներ բացելով պատմության անդաստանում: Վարդանանցով պատմության մի նոր շրջան է սկսվում հայոց կյանքում, որը բնորոշվում է սեփական ինքնության հանդեպ հավատարմության հաստատումով, ազատության համար պայքարի գիտակցության արթնացմամբ», - նշեց Գեւորգ Սրբազանը:

«451 թ. Ավարայրի ճակատամարտը հավաստեց հայ ժողովրդի կապվածությունը քրիստոնեական հավատի արժեքներին, զորացրեց մեր ազգային ինքնության զգացումը, առնականացրեց մեր դիմագիծը: Բայց Վարդանանց շարժումն ավելին է, քան հաճախ

Ս. Գառնիայում Ս. Խաչի տաճարում ուխտի պահին

Հայրապետական մաղթանք

մեկնաբանվում է: Իրականում այն ազգային շահերի անհամեմատ ավելի մեծ շրջանակ էր ընդգրկում, ավելի կարեւոր նպատակներ էր հետապնդում, ավելի խորքային հիմնախնդիրներ լուծում: Դրա լավագույն վկայություններն են այդ ոգու հետագա դրսեւորումները, այն գործուն ազդեցությունները, որոնք հետեւողականորեն խթանեցին ազատ եւ ստեղծագործ կյանքով ապրելու ձգտումը հայ ժողովրդի գիտակցության մեջ, օժտեցին նրան նպատակասլաց կամքով: Նրա պատմական ազդեցությունն այնքան բազմաշերտ է, որ յուրաքանչյուր դարաշրջան կարողացել է յուրովի օգտվել այդ փորձառությունից: Սա վկայում է այն մասին, որ Վարդանանց շարժումը չի կարող կապվել պատմական որոշակի շրջանի հետ, այն գերպատմական իրադարձություն է, որը մշտապես ուղեկցում է մեզ, մեր լինելության արմատին են կապված նրա ընձյուղները: Վարդանանց հանճարը մեզ սովորեցրեց հավատալ դարերով փայփայած համազգային մեր երազին, դարձնել այն նպատակ, ապրել եւ պայքարել հանուն դրա», - ընդգծեց Սրբազանն իր քարոզում:

Սրբազան Հայրը Մայր Աթոռի միաբանության անունից նաեւ շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին անվանակոչության տոնի առիթով, որը նշվում է Ս. Վարդանանց զորավարաց հիշատակի օրը:

Քարոզի ավարտին, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով, Իջման Ս. Սեղանի առջեւ նախագահությամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի կատարվեց Հայրապետական մաղթանք: Մայր Աթոռի միաբաններն ու բարեպաշտ ժողովուրդը աղոթք բարձրացրեցին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքի արեւշատության, խաղաղ ու բեղուն հայրապետության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՆ

Փետրվարի 18-ին, Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրատանը, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում՝ նվիրված «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի անցած ուղուն, ձեռքբերումներին եւ առկա խնդիրներին: Քննարկումը կազմակերպվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից ԵՀԽ Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Հանդիպմանը ներկա էին հոգեւորականներ, կրթական գերատեսչության, կրթական հարցերով զբաղվող պետական կառույցների, դպրոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քննարկման սկզբում բացման խոսքով հանդես եկավ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը:

Ապա հավաքի առիթով ներկաներին իր օրհնությունն ու պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Անդրադառնալով հանրակրթական դպրոցում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման կարեւորությանը՝ Նորին Սրբությունը մասնավորապես ընդգծեց. «**Դպրոցից սկսվելով՝ հավատքի գրագիտությունը պիտի դառնա մեր կյանքի անբաժանելի մասը՝ զորացնելով մեր հայ-քրիստոնյա ինքնությունը, հաստատելով մեր ժողովրդին հոգեւոր-բարոյական արժեքների ու հայրենական ավանդների մեջ:**

Համաշխարհայնացման եւ գիտատեխնիկական ձեռքբերումների արդի ժամանակներում մեր նվիրական պարտականությունն է կրթության զարգացման ընթացքներում հայոց բազմադարյա հոգեւոր եւ մշակութային ավանդների պահպանումն ու սերնդեսերունդ փոխանցումը: Մեր ազգային արժեքները ճանաչող, հավատքով ամուր ու հաստատակամ, արդի գիտելիքներով զինված երիտասարդ սերունդն է, որ պիտի համընթաց պահի մեր ժողովրդին կյանքի զարգացումներին եւ առաջընթացին՝ հոգեւոր-ազգային մշակույթի հարուստ հենքի վրա բարձրացնելով ու կառուցելով ազգային մեր կյանքը»:

Վեհափառ Հայրապետը նաեւ խոսեց առարկայի դասավանդման գոհացուցիչ արդյունքների մասին: «Հայրապետիս համար մեծ ուրախություն է տեսնել բարի արգասիքները, որ շարունակում են արձանագրվել ազգային մեր կրթօջախներում՝ ի խնդիր մեր սրբազան հավատքի եւ հայ ինքնության անաղարտ պահպանման ու զորացման: «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի շնորհիվ այսօր մեր երեխաները ճանաչում են հավատքի սկզբունքները, մեր Եկեղեցին ու նրա առաքելությունը, հաղորդ դառնում ազգային-եկեղեցական տոներին: Ուրախալի է, որ շատ հաճախ աշակերտներն իրենք են դառնում այդ տոնակատարությանց կազմակերպողները՝ դրանով իսկ արտահայտելով Եկեղեցու եւ ազգի նվիրյալ ու հավատարիմ զավակը լինելու իրենց նախանձախնդրությունը եւ իրավունքը», - նշեց Նորին Սրբությունը:

Խոսքի ավարտին, շնորհակալություն հայտնելով քննարկման մասնակիցներին, Վեհափառ Հայրապետը իր մասնավոր գնահատանքը բերեց Կրթության եւ գիտության նախարարին՝ Հայ Եկեղեցու եւ քրիստոնեական կրթության հանդեպ նրա նախանձախնդրության եւ ամենայն աջակցության համար: Այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունը հղեց «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող բոլոր ուսուցիչներին, ովքեր անխոնջ նվիրումով պատանիների հոգում կերտում են հայ քրիստոնյայի կերպարը, ապա նաեւ դասագրքերի, ուսուցչի ձեռնարկների, ուսումնական ծրագրերի մշակողներին ու կազմողներին: Հայոց Հայրապետը նաեւ գնահատանքով եւ օրհնությամբ հիշատակեց Մայր Աթոռի բարերար տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին, ում ազնիվ նվիրատվությամբ հնարավոր եղավ աշակերտի սեղանին դնել «Հայ Եկեղեցու պատմության» դասագիրքը:

Քննարկման մասնակիցներին նաեւ ողջունեց Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: «...Ուզում եմ մեկ անգամ եւս շեշտել այն պարզ ճշմարտությունը, որ արձանագրված է մեր սրտերում եւ ամրագրված է հայոց Սահմանադրության մեջ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի բացառիկ առաքելություն մեր ազգային ինքնության պահպանման, հոգեւոր մշակութային արժեքների զարգացման գործում: ...Դպրոցը նաեւ դաստիարակության վայր է, դպրոցը հայի ինքնության պահպանման, վերարտադրման, հայոց պետության քաղաքացի կերտելու վայր է: Եւ այստեղ ում ապավինել, եթե ոչ Մայր Աթոռի, մեր Սուրբ Եկեղեցու աջակցությանը: Եկեղեցու հետ համագործակցությունը թույլ է տալիս մեզ, մեր երեխաներին ներմուծել բարոյականություն, բարոյագիտություն եւ արժեքներ, թույլ է տալիս մեր աշակերտներին կոփել որպես հայեր եւ թույլ է տալիս առաջին անգամ իրենց համար թակել հոգեւոր իմաստության դռները», - ընդգծեց ԿԳ նախարարն իր խոսքում:

Հանդիպման ժամանակ զեկույցներով հանդես եկան ՔԴԿ-ի աշատակից Ելենա Հարությունյանը եւ ԿԳ նախարարությունից Նարինե Հովհաննիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՎԱՂՈՒՀԱՍ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Փետրվարի 19-ին Արցախի թեմի գործող եկեղեցիները համալրվեցին եւս մեկով. թեմական առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանի ձեռամբ օծվեց Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի Ս. Մարիամ Աստվածածին նորակառույց եկեղեցին:

Նախկինում մի քանի եկեղեցիներ ունեցած Վաղուհաս գյուղը խորհրդային շրջանից տասնամյակներով զրկված էր սեփական աղոթատուն ունենալուց: Նոր եկեղեցին սկսել է կառուցվել 2007-ից՝ բարերարությամբ ծնունդով վաղուհասցի, ռուսաստանաբնակ գործարար Գրիգորի Հայրապետյանի: Եկեղեցու բացումը յուրօրինակ նվեր էր հայրենի գյուղին՝ Վաղուհասի ազատագրման 19-րդ տարեդարձի առիթով:

Արցախի թեմի առաջնորդը, թեմի հոգեւորականաց դասի հետ, նախ սրբալույս մյուռոնով օծեց եկեղեցին, այնուհետեւ մատուցեց անդրանիկ Ս. Պատարագը:

Հընթացս Ս. Պատարագի խոսված քարոզում Պարգեւ Սրբազանը շնորհավորեց վաղուհասցիներին եւ հորդորեց մշտապես վերանորոգել իրենց քրիստոնեական հավատքի ուխտը նորակառույց աղոթքի տանը:

Արցախի թեմի առաջնորդը եկեղեցու բարերարին խորհրդանշական հուշանվեր եւ երախտագիր հանձնեց, որում մասնավորապես ասվում է. «Հարգարժան պարոն Գրիգորի Հայրապետյան, հարազատ զավակ Հայ Առաքելական Եկեղեցու, հայտնում ենք Ձեզ Մեր խորին երախտագիտությունը եւ հայրական գոհունակությունը, որ Դուք Ձեր ջանքերով

օժտեցիք հարազատ Վաղուհաս գյուղը նորակառույց Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցիով՝ խնամք տանելով համագյուղացիների հոգևոր կարիքների համար: Եւ այն օծման հասցրեցիք գյուղի ազատագրման 19-րդ տարեդարձին: Մաղթում ենք Ձեզ եւ Ձեր հարազատներին քաջակորով առողջություն, իսկ Ձեզ՝ մեծ կարողություն՝ շարունակելու Ձեր ազգանվեր ու աստվածահաճո առաքելությունը»:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Արցախի իշխանությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան զինվորականներ, ազատամարտիկներ, ուխտավորներ Արցախից, ՀՀ-ից ու ՌԴ-ից:

Հավարտ հոգևոր արարողության տեղի ունեցավ մատաղի բաշխում եւ ժողովրդական տոնախմբություն:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

Փետրվարի 21-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ դեսպաններ Քեթրին Ջեյն Լիչին եւ Ջոնաթան Ջեյմս Էյվզին:

Շնորհավորելով դեսպաններին նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքներն ուղղեց նրանց: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նախորդ դեսպանների պաշտոնավարման շրջանում ձեւավորված սերտ կապերը դեսպանատան եւ Մայր Աթոռի միջեւ կշարունակվեն:

Հանդիպմանը մասնավոր անդրադարձ կատարվեց Մեծ Բրիտանիայի հայկական համայնքին եւ հայոց թեմի գործունեությանը: Հայոց Հայրապետը դեսպաններին ներկայացրեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առջեւ ծառացած արդի մարտահրավերները, ինչպես նաեւ Մայր Աթոռի գործունեությունը կրթական եւ սոցիալական ոլորտներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՐԱՆԵՍՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Փետրվարի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրանեստ խորհրդարանական վեհաժողովի սոցիալական, կրթության, մշակույթի եւ քաղաքացիական հասարակության հարցերով հանձնաժողովի պատգամավորների պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Աժ պատգամավոր, հանձնաժողովի համանախագահ Արտակ Զաքարյանի:

Ողջունելով պատվիրակության անդամների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Հայաստանը եւ Եւրոպան կրողն են մի արժեհամակարգի, որի հիմքում ընկած են քրիստոնեական արժեքները, որոնք այսօր էլ պիտի շարունակեն հիմք ծառայել համագործակցության եւ կյանքի հետագա զարգացման համար:

Վեհափառ Հայրապետը նաեւ կարեւորեց հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքները սոցիալական, մշակութային եւ կրթական ոլորտներում՝ մաղթելով նորանոր հաջողություններ հանձնաժողովի առաքելությանը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նման ժողովների անցկացումը եւ փոխադարձության փոխանակումը մեծապես կնպաստեն Հայաստանի առջեւ ծառացած տարբեր մարտահրավերների հաղթահարմանը եւ երկրի առաջընթացին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներգրավվածությանը խաղաղասիրական առաքելության մեջ, կարեւորվեցին մարդկանց եւ ազգերի միջեւ սիրո, համերաշխության եւ փոխըմբռնման ոգու հաստատմանն ուղղված ջանքերը: Պատասխանելով պատվիրակության անդամների հարցերին՝ Նորին Սրբությունը տեղեկություններ հաղորդեց Հայոց Եկեղեցու պատմության, կառուցվածքի, տարբեր երկրներում գործունեության վերաբերյալ: Հայոց Հայրապետը խոսեց նաեւ Քույր եկեղեցիների հետ Հայոց Եկեղեցու հարաբերությունների, ինչպես նաեւ երիտասարդության հետ տարվող աշխատանքների մասին:

Ընդունելությունից հետո պատվիրակության անդամներն այցելեցին Մայր Տաճար, ապա Ալեք եւ Մարի Մանուկյան գանձատուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Հայրենասեր ու ազգանվեր, ինչպես նաեւ գիտական, գրական ու հրապարակախոսական գործունեության համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշան ստացան պատմաբան Էմմա Կոստանդյանը եւ նյարդաբան ակադեմիկոս Սուրեն Զոհրաբյանը:

Արարողության սկզբում ողջույնի խոսքով հանդես եկավ Տ. Սիփան աբեղա Գեւորգյանը: Այնուհետեւ մեծարյալների կյանքին ու գործունեությանն անդրադարձան ՀՀ Գիտության Ազգային Ակադեմիայի թղթակից անդամ դոկտոր-պրոֆեսոր Ալբերտ Խառատյանը եւ Առողջապահության ազգային ինստիտուտի փոխտնօրեն պրոֆեսոր Յուրի Թունյանը:

Այնուհետեւ «Էջմիածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը եւ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը:

Տիկին Էմմա Կոստանդյանին ուղղված հայրապետական կոնդակում մասնավորապես նշվում էր. «Գոհունակ սրտով ենք անդրադառնում պատմագիտության ասպարեզում Ձեր գնահատարժան վաստակին ու եկեղեցանվեր ընթացքին: Տասնամյակներ շարունակ ջանադիր աշխատանքով հեղինակված Ձեր բազմաթիվ մենագրություններն ու հոդվածները ներկայացնում են հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի, մշակույթի եւ արվեստի ձեռքբերումները եւ մեծապես օգտակար են բազմադարյա հայոց պատմության ուսումնասիրման համար:

Ուրախալի է Հայրապետիս համար եւ հատկապես ուշադրության արժանի այն իրողությունը, որ Դուք Ձեր ազգօգուտ աշխատանքի մեծագույն մասը տրամադրել եք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության ուսումնասիրման եւ նորովի ներկայացման գործին: Ձեր աշխատություններից շատերը՝ նվիրված գործունեությանը ազգային եկեղեցական բազում մեծանուն դեմքերի, ինչպիսիք էին Գարեգին Սրվանձտյանցը, Մկրտիչ Խրիմյանը, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, ներկայացնում են նրանց հայրենասեր հոգու տեսիլքները, ուժն ու լավատեսությունը մեր ժողովրդի լուսավոր գալիքի հանդեպ»:

Տիար Սուրեն Զոհրաբյանին ուղղված կոնդակում ասվում էր. «Բժշկության ասպարեզում մասնագիտական փորձառությունը Դուք սկսեցիք Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ Ձեր գիտելիքներն ու կարողություններն ի սպաս բերելով մարտի դաշտերում վիրավորված զինվորների ապաքինմանը: Պատերազմի ավարտին վերադառնալով Հայրենիք, հիմնադրեցիք նյարդավիրաբուժական բաժանմունքը եւ ամբողջանվեր ոգով ծառայեցիք մեր երկրում բժշկության այս կարեւոր ճյուղի զարգացմանը:

Ձեր անունն այսօր ճանաչված է ինչպես Հայաստանում, այնպես եւ արտերկրում՝ որպես առաջնակարգ նյարդաբան, անխոնջ գիտնական եւ մանկավարժ: Ձեր հարյուրավոր ուսումնասիրությունները, գրքերն ու հրապարակումները, միջազգային գիտաժողովներում ու հեղինակավոր կրթօջախներում դասախոսություններն ու զեկուցումներն արժանացրել են Ձեզ բազում կոչումների ու պարգեւների: Ձեր ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդներ պատրաստել են գիտական աշխատություններ՝ առաջին քայլերը կատարելով գիտության լուսավոր անդաստանում»:

Կոնդակների ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը մեծանուն գործիչներին հանձնեց Հայ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանները:

Ապա գիտության նվիրյալներն իրենց սրտի խոսքն ասացին պարգեւաբաշխության առիթով: Նրանք խորին շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ցուցաբերած ուշադրության ու գնահատանքի համար՝ ընդգծելով, որ իրենց ողջ կյանքի ընթացքում մշտապես կապված են եղել Հայ Եկեղեցուն:

Պարգեւաբաշխության ավարտին մեծարյալներին ու ներկաներին իր օրհնությունը բերեց Նորին Սրբությունը: Շնորհավորելով տիար Զոհրաբյանին ու տիկին Կոստանդյանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ իր հոգու պարտքն է պարգեւատրել նման անձանց, ովքեր բազմաթիվ օգտակար ծառայություններ են մատուցել Հայրենիքին, իրենց գիտելիքներն ու ձեռքբերումներն ի սպաս են դրել հայ ժողովրդին, ինչպես նաեւ, հակառակ ժամանակաշրջանի դժվարություններին, երկար տարիներ շարունակ Հայ Եկեղեցու եւ Մայր Աթոռի կողքին են գտնվել: Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերը վաստակաշատ գործիչներին պարգեւի քաջառողջ կյանքի երկար տարիներ եւ նորանոր հաջողություններ նրանց ազգօգուտ գործունեության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՈՆԴԱԿՆԵՐ

անունը	ազգանունը	թեմը	պարգեւը	ժամանակը
Արսեն	Սայան	ԱՄՆ Արեւելյան թեմ	Ս. Սահակ - Ս. Մեսրոպ	21.02.2012
Լորա	Գույումճյան	ԱՄՆ Արեւմտյան թեմ	Ս. Սահակ - Ս. Մեսրոպ	22.02.2012
Մինաս	Գոճայան	ԱՄՆ Արեւմտյան թեմ	Ս. Սահակ - Ս. Մեսրոպ	22.02.2012
Հնազանդ Նանիկ	Քիաթիպյան	Ֆրանսիայի թեմ	Ս. Ներսես Շնորհալի	21.02.2012

ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Լանջախաչի իրավունք

անուն-ազգանունը	թեմը/երկիրը	ժամանակը
Տ. Հովել քհն. Գամաղելյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	15.02.2012
Տ. Արարատ քհն. Պողոսյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	
Տ. Մարկոս քհն. Մանգասարեան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	
Տ. Նիկողայոս քհն. Հովհաննիսյան	Արարատյան Հայրապետական թեմ	
Տ. Միքայել քհն. Նուրիջանյան	Արարատյան Հայրապետական թեմ	
Տ. Աշոտ քհն. Սաֆարյան	Արարատյան Հայրապետական թեմ	
Տ. Գևորգ քհն. Միրզոյան	Հարավային Ռուսաստանի թեմ	
Տ. Ներսես քհն. Ղալայան	Գուգարաց թեմ	
Տ. Ահարոն քհն. Գրիգորյան	Գուգարաց թեմ	
Տ. Վիգեն քհն. Ղազարյան	Գուգարաց թեմ	
Տ. Վազգեն քհն. Հովհաննիսյան	Վայոց Ձորի թեմ	
Տ. Հայկ քհն. Սահակյան	Արագածոտնի թեմ	
Տ. Եփրեմ քհն. Զարգարյան	Արագածոտնի թեմ	
Տ. Սողոմոն քհն. Մինասյան	Շիրակի թեմ	
Տ. Ստեփանոս քհն. Իգնաթևոսյան	Գեղարքունյաց թեմ	
Տ. Շավարշ քհն. Սիմոնյան	Տավուշի թեմ	
Տ. Դավիթ քհն. Շահկյան	Ազգային Բանակ	
Տ. Հուսիկ քհն. Հարությունյան	Վիրահայոց թեմ	

Տ. Նարեկ քին. Ղուշչյան	Վիրահայոց թեմ
Տ. Սամվել քին. Թորոսյան	Վիրահայոց թեմ

Ծաղկյա փիլոնի իրավունք

անուն-ազգանունը	թեմը/երկիրը	ժամանակը
Տ. Խորեն քին. Կիրակոսյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	15.02.2012
Տ. Պարույր քին. Ավետիսյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	
Տ. Վահրամ քին. Մելիքյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	